# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«30» ապրիլի 2015 թվական N 43–Ա**

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով՝ **համայնքի ավագանին որոշում է**.

Հաստատել Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի ապրիլի 30-ի հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

**Կողմ (14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան

Ա. Բաղրամյան

Ա.Գրիգորյան

Վ.Եդիգարյան

Գ.Թաթարյան

Հ. Խաչատրյան

Հ. Կարապետյան

Տ.Հովհաննիսյան

Ն. Մեսրոպյան

Ռ.Մխիթարյան

Է. Մկրտչյան

Վ.Շիրինյան

Ե. Պողոսյան ____________________

Մ. Սահակյան ____________________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«30» ապրիլի 2015 թ.**

Հավելված
Գյումրի համայնքի ավագանու
2015թ. ապրիլի 30 -ի
N 43-Ա որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

**30 ապրիլի 2015 թվական, սկիզբը՝ ժ. 12:00**

**1.** ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)**

**2.** ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 205-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**
**ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)**

3. ՄԱՅԻՍՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**
**ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)**

**4.** <<ԵՐԿՐԱՊԱՀ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ>> ԳՅՈՒՄՐՈՒ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**
**ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)**

**5.** ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**
**ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)**

**6.** ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՅՐԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ <<ԳՅՈՒՄՐԻԻ ՈՒՍՈՒՄՆԱ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ >> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**
**ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)**

**7.** ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ ՓՈՂՈՑԻ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ ԹԻՎ 33 ՏԱՆԸ ԿԻՑ, ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՔԱՆԴՄԱՆ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՂԲԻ ՀԵՌԱՑՄԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԱԽԿԻՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ <<ՏԻՄ-ՇԻՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**
**ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)**

**8.** ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ԱՆԻ ՓՈՂԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**
**ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)**

**9.** ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ԲԱՂՆԻՔԻ ԵՎ ՎԱՐՍԱՎԻՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՆՈՒՄՆԵՐԸ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ՝ ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՁԵՎՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**
**ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)**

**10.** ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**
**ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)**

**11.** ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի N 19-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**
**ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**12.** ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**
**ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**13.** ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԻ ԹԱՂԱՄԱՍԻ 11-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 10/5 ՀԱՍՑԵԻ ԱՆԱՎԱՐՏ ՇԵՆՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**
**ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**14.** ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՂԱՐՍԻ ԽՃՈՒՂԻ N 4/7 ՀԱՍՑԵԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**
**ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**15.** ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ N 126 ՀԱՍՑԵԻ ՇԵՆՔԸ ԲՆԱԿՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀԱՏՈՒՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**
**ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**16.** ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**
**ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**17.** ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՂԱԿԱՅԻՆ ՓՈՂՈՑ N 63/1 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**
**ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

**18.** ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի NN 139-Ա, 140-Ն, 149-Ա, 151-Ա, 160-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**
**ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

19. 2015 ԹՎԱԿԱՆԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՎԵԼ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ՑՈՒՅԱԲԵՐԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**
**ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Մ.ՂԱԶԱՐՅԱՆ)**

20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՍԱՄԲՈ-ՁՅՈՒԴՈՅԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱԴԱՀՏԻ ՓԼՎԱԾ ՊԱՐՍՊԻ ՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**
**ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Մ.ՂԱԶԱՐՅԱՆ)**

21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՇԻՆՎԵՐԱՆՈՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**
**ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Մ.ՂԱԶԱՐՅԱՆ)**

22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**
**ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ՍՈՒԼԹԱՆՅԱՆ)**

23. <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՅՐԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԳՅՈՒՄՐԻԻ ՈՒՍՈՒՄՆԱ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ 98 ԵՎ ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒ 144 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**
**ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ՄԻՆԱՍՅԱՆ)**

24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 15 ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ԵՎ ՄՈՒՏՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**
**ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂՆԵՐ՝ Շ.ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ**
**Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)**

25. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 216 (ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՎԵՑ) ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**
**ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ՔԻԼԱՎՅԱՆ)**

26. ՄԱՐՈՒՍՅԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԵՎ ԷՄԻՆ ՄԱԴՈՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**
**ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ՔԻԼԱՎՅԱՆ)**

27. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի №190-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**
**ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ)**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«30» ապրիլի 2015 թվական N 44–Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 205-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 5-րդ մասի 1-ին պարբերությամբ, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2015թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 205-Ն որոշմամբ հաստատված Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 2-րդ և 3-րդ հատվածներում կատարել փոփոխություններ՝ շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն համապատասխանաբար՝ NN 1, 2 հավելվածների:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ կատարել համապատասխան փոփոխությունները օրենքով սահմանված կարգով:

**Կողմ (14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան __________

Ա. Բաղրամյան __________

Ա.Գրիգորյան __________

Վ.Եդիգարյան __________

Գ.Թաթարյան __________

Հ. Խաչատրյան __________

Հ. Կարապետյան __________

Տ.Հովհաննիսյան __________

Ն. Մեսրոպյան __________

Ռ.Մխիթարյան ____________________

Է. Մկրտչյան ____________________

Վ.Շիրինյան ____________________

Ե. Պողոսյան ____________________

Մ. Սահակյան ____________________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**

**«30» ապրիլի 2015 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# ՈՐՈՇՈՒՄ

**«30» ապրիլի 2015 թվական N 45-Ա**

## ՄԱՅԻՍՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրու զինկոմիսարիատի ներկայացրած ցուցակները և երկրապահ կամավորների միության Գյումրու տարածքային բաժանմունքի նախագահ Վարդան Սարգսյանի ներկայացրած գրությունը (քաղաքապետարանում մուտքագրված 2015 թվականի ապրիլի 13-ին համապատասխանաբար՝ NN 4094,4099 թվագրումներով)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1.Հատկացնել դրամական օգնություն սոցիալապես ծանր պայմաններում ապրող ներքոգրյալ ընտանիքներին և անձանց.

1)արցախյան պատերազմում (1991-1994թթ.) զոհված՝ թվով 105 (մեկ հարյուր հինգ) ազատամարտիկների ընտանիքներին, յուրաքանչյուրին 20.000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 2.100.000 (երկու միլիոն մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N1 հավելվածի,

2) զոհված (մահացած) թվով 164 (մեկ հարյուր վաթսունչորս) զինծառայողների ընտանիքներին, յուրաքանչյուրին 20.000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 3.280.000 (երեք միլիոն երկու հարյուր ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N2 հավելվածի,

3) արցախյան պատերազմի 1-ին կարգի հաշմանդամ թվով 18 (տասնութ) ազատամարտիկներին, յուրաքանչյուրին 15.000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 270.000 (երկու հարյուր յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N3 հավելվածի,

4) 2-րդ, 3-րդ կարգի հաշմանդամ թվով 242 (երկու հարյուր քառասուներկու) ազատամարտիկներին, յուրաքանչյուրին 10.000 (տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 2.420.000 (երկու միլիոն չորս հարյուր քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N4 հավելվածի,

5) Գյումրի քաղաքի Հայրենական Մեծ պատերազմի մասնակից թվով 61 (վաթսունմեկ) վետերաններին, յուրաքանչյուրին 15.000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 915.000 (ինը հարյուր տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N5 հավելվածի,

6) 1956 թվականի հոկտեմբերին Հունգարիայի հեղաշրջման ճնշմանը մասնակից թվով 35 (երեսունհինգ) վետերաններին, յուրաքանչյուրին 15.000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 525.000 (հինգ հարյուր քսանհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N6 հավելվածի,

7) Աֆղանստանի Դեմոկրատական Հանրապետության տերիտորիայում մարտական գործողությունների ժամանակ զոհված թվով 4 (չորս) զինծառայողների ընտանիքներին, յուրաքանչյուրին 15.000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 60.000 (վաթսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N7 հավելվածի,

8) երկրապահ կամավորների միության անդամներ, սոցիալապես անապահով թվով 16 (տասնվեց) ազատամարտիկներին, յուրաքանչյուրին 15.000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 240.000 (երկու հարյուր քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ համաձայն N8 հավելվածի:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին սույն որոշման 1-ին կետում նշված գումարների հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 10/4/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ բյուջեից>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

**Կողմ (14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան ______

Ա. Բաղրամյան ______

Ա.Գրիգորյան ______

Վ.Եղիգարյան ______

Գ.Թաթարյան ______

Հ. Խաչատրյան ______

Հ. Կարապետյան ______

Տ.Հովհաննիսյան ______

Ն. Մեսրոպյան ______

Ռ.Մխիթարյան ______

Է. Մկրտչյան ______

Վ.Շիրինյան ______

Ե. Պողոսյան ______

Մ. Սահակյան ______

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք. Գյումրի**

**«30» ապրիլի 2015 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«30» ապրիլի 2015 թվական N 46-Ա**

### <<ԵՐԿՐԱՊԱՀ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ>> ԳՅՈՒՄՐՈՒ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, հիմք ընդունելով <<Երկրապահ Կամավորականների Միություն>> Գյումրու տարածքային բաժանմունքի նախագահ Վարդան Սարգսյանի գրությունը (քաղաքապետարանում մուտքագրված 2015թվականի ապրիլի 21-ին N 4479 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. 2015թվականի մայիսյան տոներին նվիրված՝ Եռաբլուրում և Սարդարապատում անցկացվելիք միջոցառումներին մասնակցելու համար <<Երկրապահ Կամավորականների Միություն>> Գյումրու տարածքային բաժանմունքին հատկացնել 240.000 (երկու հարյուր քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

**Կողմ (14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան ______________

Ա. Բաղրամյան ______________

Ա.Գրիգորյան ______________

Վ.Եղիգարյան ______________

Գ.Թաթարյան ______________

Հ. Խաչատրյան ______________

Հ. Կարապետյան ______________

Տ.Հովհաննիսյան ______________

Ն. Մեսրոպյան ______________

Ռ.Մխիթարյան ____________________

Է. Մկրտչյան ____________________

Վ.Շիրինյան ____________________

Ե. Պողոսյան ____________________

Մ. Սահակյան ____________________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«30» ապրիլի 2015 թ.**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

**«30» ապրիլի 2015 թվական N 47-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Գրողների Միության Շիրակի մարզային վարչության նախագահի գրությունը (քաղաքապետարանում մուտքագրված 2015 թվականի ապրիլի 03-ին N3634 թվագրմամբ )՝ **համայնքի ավագանին որոշում է**.

1.2015 թվականին նախատեսված բազմաբնույթ գրական միջոցառումները պատշաճ մակարդակով կազմակերպելու և իրականացնելու համար Հայաստանի Գրողների Միության Շիրակի մարզային բաժանմունքին որպես նվիրատվություն հատկացնել 600.000 (վեց հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին ՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ այն փոխանցելով Ամերիա բանկ 1570001185520100 հաշվեհամարին:

**Կողմ (14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան ________

Ա. Բաղրամյան ________

Ա.Գրիգորյան ________

Վ.Եդիգարյան ________

Գ.Թաթարյան ________

Հ. Խաչատրյան ________

Հ. Կարապետյան ________

Տ.Հովհաննիսյան ________

Ն. Մեսրոպյան ____________________

Ռ.Մխիթարյան ____________________

Է. Մկրտչյան ____________________

Վ.Շիրինյան ____________________

Ե. Պողոսյան ____________________

Մ. Սահակյան ____________________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«30» ապրիլի 2015 թ.**